

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2020 թվականի հունվարի 21-ին կայացած Գիտական Խորհրդի N6 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 30-ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ

1. 2019/2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննությունների ընթացքը ֆակուլտետում
/զեկ. Վ.Վարդանյան/
2. 2019/2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի դասախոսների անհատական բեռնվածության և ուսումնա-մեթոդական աշխատանքների կատարման ընթացքը ամբիոններում
/զեկ. ամբ.վարիչներ/
3. Տիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ
/զեկ.ամբ. վարիչ Ա.Գրիգորյան/
4. Ընթացիկ հարցեր

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. **ԼՍԵՑԻՆ.** պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը ֆակուլտետում 2019/2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննությունների ընթացքի վերաբերյալ: Նա նշեց, որ փաքցված է առկա և հեռակա ուսուցման քննությունների հաստատված ժամանակացույցը: Ֆակուլտետում առկա և հեռակա ուսուցման քննական գործընթացը զուգահեռ է ընթանում: Նա նշեց, նաև, որ 1ին լուծարքային շրջանը կկայանա փետրվար ամսին: Վ.Վարդանյանն ասաց նաև, որ քննություններն ընթանում են բնականոն հունով և քննաշրջանի ավարտից հետո միայն կկարողանան խոսել վերջիններիս որակից:

ՀԱՐՅԵՐ ՏՎԵՑԻՆ՝

Մ.Գրիգորյան – Արդյոք եղել է որևէ դժգոհություն կապված քննության անցկացման հետ:

Ի պատասխան՝ Վ.Վարդանյանն ասաց, որ որևէ դժգոհության դեպք չի արձանագրվել: Փոխվել է միայն մեկ քննության անցկացման ժամը՝ դեկանատին տեղյակ պահելով:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

2.1.ՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց. Վահագն Գրիգորյանի, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց. Արսեն Գրիգորյանի, Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ պրոֆ.Սարգիս Հայրոյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ դոց.Պետրոս Դավթյանի, Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ դոց.Շահեն Խաչատրյանի, Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ դոց.Գագիկ Մարկոսյանի և Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Սեյրան Սուվարյանի հաղորդումը ամբիոններում 2019/2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի դասախոսների անհատական բեռնվածության և ուսումնա-մեթոդական աշխատանքների կատարման վերաբերյալ: Նրանք մանրամասն ներկայացրեցին ամբիոնում առկա դասախոսական և լաբորանտական հաստիքների քանակը: Ամբիոնի վարիչները ներկայացրեցին ամբիոններում տպագրված և տպագրման ընթացքում գտնվող ուսումնամեթոդական ձեռնարկները: Նշեցին նաև, որ ամբիոններում կատարվել է պահանջվող նորմերին համապատասխան կատարված դասաբաշխումը և ծանրաբեռնվածությունները: Բոլոր ամբիոնի վարիչները նշեցին, որ ուսումնական պրոցեսում թերացումներ կամ բացթողումներ չեն եղել, բացառությամբ Պ.Դավթյանի, ով նշեց, որ առաջին դասաժամերին նկատվել են ուշացումներ, որոնք դադարել են բանավոր արված նկատողությունից հետո: Դոց.Ս.Սուվարյանը նշեց, որ դասախոսությունների հետ կապված խնդիրներ չեն առաջացել, սակայն գործնական և սեմինար դասաժամերին գրանցված բացակայությունները շատ են, հատկապես ուրբաթ օրվա 7-8 դասաժամերին մեծաքանակ է բացակայությունները: Սերվիսի ամբիոնը համատեղ որոշել է հունվար-փետրվար ամիսներին կազմակերպել սեմինարներ երիտասարդ

մասնագետների հետ: Սուվարյանը կարևորեց նաև սեմինարավարների ներկայությունը քննություններին՝ դասախոսություն կարդացող դասախոսի հետ:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. պրոֆ.Վ.Վարդանյանը փորձեց ճշտել թե ինչ վիճակում են կուրսային աշխատաքների պաշտպանության գործընթացը: Դոց.Մ.Գրիգորյանը հարցրեց արդյոք դասամատյանում չգրանցված դասաժամեր կա՞ն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց.Մ.Գրիգորյանը նշեց, որ ի տարբերություն նախորդ տարիների այս տարի դասամատյանների լրացումը բարվոք վիճակում է: Կոչ արեց ամբիոնի վարիչներին հետևողական լինել, ինչը հնարավորություն կտա ամբիոնի վարիչին տեղյակ լինել դասախոսի բացակայությունների և ուշացումների վերաբերյալ, քանի որ բոլոր ամբիոններում դասախոսի կողմից ուշացման դեպքեր դիտվել են: Գրիգորյանի խոսքով դասախոսները իրենք են պարտավոր դեկանատից վերցնել դասամատյանները այլ ոչ թե հանձնարարել ավագներին:

պրոֆ.Թ.Վարդանյանը հրավիրեց խորհրդի նախագահի և անդամների ուշադրությունը դասացուցակի ճիշտ կազմման վրա, քանի որ տեխնիկական խնդրի պատճառով դասացուցակի ոչ ճիշտ կազմելու արդյունքում կուրսի մի մասը թերի է լսում որոշ առարկաներ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՍԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց. Ա.Գրիգորյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ: Նա ներկայացրեց ամբիոնում առկա ուսանողների քանակը: Ներկայացրեց ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը ինչես նաև նրանց կողմից սպասարկվող դասընթացները: Ներկայացրեց հրատարակված և ավարտական փուլում գտնվող գիտական աշխատաքների քանակը: Ներկայացրեց ամբիոնի կապերը արտերկրյա համալսարանների հետ և փոխադարձ այցելությունները և ամբիոնի կողմից ունեցած ձեռքբերումները: Ներկայացրեց ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման բազաների վիճակը: Ներկայացրեց Մանկավարժության որակավորումը ստանալու

գործընթացը: Խոսեց Աշխարհագրություն առարկայից օլիմպիադայի անցկացման կարևորության, կազմակերպման առանձնահատկությունների և պայմանների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. պրոֆ Վ.Վարդանյանը, դոց.Մ.Գրիգորյանը նշեցին, որ զեկուցողը հակիրճ և բովանդակալից ներկայացրեց ամբիոնում կատարված աշխատանքը: Նրանք բարձր գնահատեցին ամբիոնում կատարված մեծածավալ աշխատանքը և առաջարկեցին ընդունել այն:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց.**Ա.Թ.Գրիգորյանի** ներկայացրաց հաշվետվությունն ընդունել և ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

Քվեարկության արդյունքում՝ ԿՈՂՄ-29, ՁԵՌՆՊԱՀ -1, ԴԵՄ-0

ՈՐՈՇԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց. **Ա.Գրիգորյանի** ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել բավարար:

4. ԸՆԹԱՅԻՎ ՀԱՐՑԵՐ

4.1 ԼՍԵՑԻՆ. **AEPI2020-043** ծածկագրով նախագծի հայաստանյան կողմի ղեկավար ՍԵրվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը «**Ռուսաստանի, Հայաստանի, Ուզբեկստանի երկրաբանական հուշարձանների ուսումնասիրվածության ներկայիս վիճակը և դրանց երկրաբանական-գեոսաշրջության (գեոտուրիստական) ներուժի գնահատականը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար**» թեմայով նախագծի հաստատման վերաբերյալ: Սուվարյանը ներկայացրեց ծրագրի նպատակը, որն է գնահատել Ռուսաստանի, Հայաստանի և Ուզբեկստանի երկրաբանական հուշարձանների ուսումնասիրվածությունը գնահատել վերջիններիս դերը գեոտուրիզմի զարգացման հարցում, որը հիմք կհանդիսանա նշված երեք տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման համար: Երկրաբանական հուշարձանների ուսումնասիրվածության գնահատման համակարգումը հնարավորություն կտա ստեղծելու երկրաբանական կառույցների միասնական բանկ, որը հետագայում կարող է դառնալ գեոտուրիզմի

ուսումնասիրման տարածք և գեոպարկ, հնարավորություն տալով պահպանելու երկրաբանական հուշարձանների բնական տեսքը և դրանց փոխանցումը գալիք սերունդներին: Այսպիսով բնության հուշարձանները ոչ միայն կպահպանվեն այլ նաև հնարավորություն կընձեռեն նոր աշխատատեղերի ստեղծման և երիտասարդ սերնդին դեպի բնություն, էկոլոգիա և պատմություն ուղղությամբ դաստիարակելու: Բնության երկրաբանական հուշարձանները հանդիսանում են յուրօրինակ միջավայր, որն իր մեջ ընդգրկում է զբոսաշրջային, էսթետիկական, կրթական, գիտական պատմական և այլ ֆունկցիաներ: Նման երկրաբանական միջավայրը հիմք է հանդիսանում ձևավորելու հատուկ ճանաչողական, կրթական կառույցներ, ներառյալ երկրաբանական պարկեր, պահպանվող տարածքներ, որոնք կհանդիսանան գեոտուրիզմի զարգացման համար: Գեոտուրիզմը համեմատաբար երիտասարդ, բայց գլոբալ արդյունաբերական տուրիզմի արագ զարգացող ճյուղ է: Տնտեսության և երկրաբանության տեսակետից գեոտուրիզմը կարելի է մեկնաբանել որպես ընդերքի շահագործման յուրահատուկ մեթոդ, որի ընթացքում ընդերքը և նրա ռեսուրսները մնում են անխախտ և օգտագործվում է միայն դրանց տեղեկատվական և էսթետիկական հատկությունները: Ներկայումս Գեոտուրիզմը համարվում է միջազգային արդյունաբերական տուրիզմի հիմնական և առավել արդյունավետ (ֆինանսական տեսակետից) ճյուղերից մեկը: Այդ տեսակետից Հայաստանի հանրապետության տարածքն ունի բարդ և բազմազան երկրաբանական կառուցվածք, ինչի արդյունքում երկրի մակերեսի վրա ձևավորվել են բազմաթիվ կառույցներ, որոնք կրում են առանձնահատուկ բնույթ: Այդ կառույցներն ունեն գիտական, ուսուցողական, էսթետիկական արժեքներ, որոնք կարող են հիմք ծառայել տուրիզմի տարբեր ճյուղերի զարգացման համար: Նախագծի արդյունքներն ուղղված կլինեն պետական նշանակության խնդիրների՝ գեոտուրիզմի զարգացման և ամրապնդման ինչպես նաև արտերկրից տուրիստների ներգրավմանը: Պրակտիկայում գեոտուրիզմը զբոսաշրջային գործունեության տեսակ է, որի մասնակիցները այցելում են երկրաբանական կառույցների և երևույթների վայրեր: Իրականում գեոտուրիզմը միավորում է և երկրաբանական կառույցները և աշխարհագրական տարածքը որպես զբոսաշրջային դեստինացիա, ուր զբոսաշրջիկը այցելելով հնարավորություն է

ունենում հետաքրքրվելով և շփվելով ճանաչելու, զարգանալու, ինչպես նաև միջավայրը արժևորելու միջոցով հանգստանալ: Նախագծի գիտական և գլխավոր նպատակն է միավորել երկրաբանական, աշխարհագրական տեսությունները զբոսաշրջային գործունեության հետ, ընդ որում զբոսաշրջային գործունեությունը դիտարկելով որպես սերվիսային գործունեության տեսակ: Վերջինս նշանակում է, որ երկրաբանական օբյեկտները և երևույթները պետք է ներկայացվեն որպես զբոսաշրջա-երկրաբանական ռեսուրս:

ՈՐՈՇԵՑԻՆ. AEP12020-043 ծածկագրով և «Ռուսաստանի, Հայաստանի, Ուզբեկստանի երկրաբանական հուշարձանների ուսումնասիրվածության ներկայիս վիճակը և դրանց երկրաբանական-զբոսաշրջության (գեոտուրիստական) ներուժի գնահատականը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար» թեմայով նախագիծը երաշխավորել ներկայացնելու Հայաստանի հանրապետության Գիտության Կոմիտե:

4.2 ԼՍԵՑԻՆ. Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչը պրոֆ.Ս.Հայրոյանի հաղորդումը “Երկրաբանապահպանություն, ջրաերկրաբանություն և ճարտարագիտական երկրաբանություն”, որպես մասնագիտություն բացելու հարցը: Զեկուցողը նշեց, որ մասնագիտության բացման անհրաժեշտությունն առաջացել է կազմակերպություններից բազմաթիվ հայտեր սատնալու արդյունքում: Հայրոյանն ասաց, որ մասնագիտության բացումը որակ ապահովելու գրավական է: Նախագծային հիմնարկներից մասնագետների պահանջարկի հիմնավորման փաստաթղթերը կներառվեն փաթեթում:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. պրոֆ.Թ.Վարդանյանը հարցրեց թե ինչպե՞ս են պատկերացնում 3 տարբեր մասնագիտություններով մասնագիտություն բացելու գործընթացը: **դոց.Հ.Մովսիսյանը** հարցրեց թե ի՞նչ որակավորում պետք է տրվի այդ մասնագիտության շրջանավարտներին: **Դոց.Ա.Պոտոսյանը** փոչձեց ճշտել արդյո՞ք առաջարկվող մասնագիտությունը առկա է պետական չափորոշիչների ցանկում և արդյո՞ք ունի իր դասիչը:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ. դոց. Հ.Մովսիսյանը չհամաձայնեց Հայրոյանի այն մտքի հետ, թե նոր մասնագիտությունը կմեծացնի դիմորդների հոսքը դեպի ֆակուլտետ: Նշեց, որ շատ ավելի պատկերավոր և հասկանալի կլինի տվյալ մասնագիտության բացման նպատակը, երբ ամբիոններին տրամադրվի հայտը, ամբողջական փաթեթը, երաշխավորության նամակները և այլ փաստաթղթեր: Մովսիսյանը անհասկանալի որակեց **“Երկրաբնապահպանություն, ջրաերկրաբանություն և ճարտարագիտական երկրաբանություն”**, բացման անհրաժեշտությունը այն դեպքում, երբ կա գործող **“Երկրաբնապահպանություն”** մասնագիտություն: Մովսիսյանը դրական գնահատեց ներկայացված առաջարկը, սակայն պետք է ներկայացվող առաջարկը հնարավորինս պարզ և ըմբռնելի լինի: **Պրոֆ.Թ.Վարդանյանը** չողջունեց նոր **“Երկրաբնապահպանություն, ջրաերկրաբանություն և ճարտարագիտական երկրաբանություն”** մասնագիտության բացումը: Նա ասաց, որ պետք է ուսումնասիրել նոր մասնագիտությունների բացման ընթացակարգը: Ասաց, որ թերահավատորեն է մոտենում նման անվանումով մասնագիտության բացման հարցին, գոնե նրա համար, որ անհասկանալի է թե ինչ որակավորում է շնորհվելու շրջանավարտին: Խոսեց նաև **“Գեոէկոլոգիան”** որպես ներկայումս գործող առանձին մասնագիտության առկայության մասին և ներկայացրեց իր կարծիքով դրա էությունը: **Դոց.Մ.Գրիգորյանն** ասաց – Մենք չենք կարող չբացել մասնագիտություններ, որոնց կարիքը խիստ կա տնտեսության մեջ: Մենք չպետք է սպասենք մեզանից մասանգետ պահանջելուն, որպեսզի մտածենք մասնագետ պատրաստելու մասին, այլ պետք է պատրաստենք և ինքներս առաջարկենք նման մասնագետներ: Առաջարկում եմ ծրագիրը ներկայացնել ամբիոններին, թող ամբիոնները ուսումնասիրեն, քննարկեն, որից հետո կներկայացնենք ռեկտորատ:

Դոց.Ա.Աղինյան - Գեոէկոլոգիան զբաղվում է երկրի կեղևի վերին շերտի փոփոխության ուսումնասիրությամբ՝ կապված մարդու գործունեության հետ: Այն պնդումներին թե Գեոէկոլոգիան երկրաբանության հետ սերտ կապված չէ, ասեմ, որ մինչև մասնագետը հիդրոերկրաբան չլինի չի կարող գնահատել գեոէկոլոգիական վիճակը, բերեմ իրական օրինակ՝ Արարատյան արտեզյան ավազանի գեոէկոլոգիական ճգնաժամի վերաբերյալ առաջին ահազանգը տվել են հիդրոերկրաբանները հանձնիս

ինձ դեռ 2002թ.: Դոց.Ա.Ադինյանը նույնացրեց հիդրոերկրաբանություն ու գեոէկոլոգիա անվանումները:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում՝ ԿՈՂՄ-28, ՁԵՌՆՊԱՀ -1, ԴԵՄ-1

ՈՐՈՇԵՑԻՆ. Առաջարկվող ծրագիրը “Երկրաբնապահպանություն, ջրաերկրաբանություն և ճարտարագիտական երկրաբանություն” մասնագիտությամբ տալ ամբիոններին և ներկայացնել ռեկտորատ:

Լսեցին - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը «Տիգրան Ջրբաշյան»-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Առաջարկվեց Քարտեզագրություն և կադաստրային գործ բաժնի 4-րդ կուրսի ուսանող Լեմգա Հունանի Հունանյանի թեկնածությունը:

Որոշեցին – Հաշվի առնելով Լեմգա Հունանի Հունանյանի ուսման գերազանց առաջադիմությունը՝ հասարակական ակտիվ գործունեությունը և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ երաշխավորել «Տիգրան Ջրբաշյան»-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

Գիտական խորհրդի նախագահ՝

Մ.Ա.Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան